4172

49199-8
Դ-13

Իսճիր
1898

2010

491·99-8
Դ-13
1
46

# ՆՈՐ ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

## ԳԱՑԿՆԵՐԱԶԱՐԴ

Պատրաստեց

Ն· Վ· ԳԱԼԱԳԱՆ

Հրատարակութիւն
ՄԱՄՈՒՐԵԱՆ ԳՐԱՏԱՆ



ГОС. П. БИБ-КА АРМ. С. С. Р.
ОБМЕННЫЙ ФОНД
ИМ. А. МЯСНИКЯНА

ԻԶՄԻՐ
ՏՊԱԳՐ· ՄԱՄՈՒՐԵԱՆ
1898



491-99-8
Պ-13

ՆՈՐ

# ԱՅԲԵՆԱՐԱՆ

## ՄԱՍՆ Ա.

Ա. ԴԱՍ

Ձայնաւորներ ([1])

ա ե է ը ի ո օ ու

Գլխագիր

Ա Ե Է Ը Ի Ո Օ ՈՒ

---

(1) Ձայնաւորներուն պարզ ձայնը պէտք է հնչել [illegible] ինչպէս ֆրանսերէն a é i ou:

## Բ. ԴԱՍ [2]

# մ

մա | մէ | մի | մու | մօ | մո | մե | մը

իմ, եմ, մամ, մոմ, ում։

# տ

տէ | տը | տա | տի | տու | տե | տօ | տո

ետ, ոտ, մօտ, մատ, միտ, մէտ։

# ն

նա | նէ | նը | նօ | նի | նո | նու | նե

ան, տուն, ա-ման, մատ-նի։

---

(2) Բաղաձայններուն բուն ձայնը պիտի հանեն տղայք ը գրին օգնութեամբ և փոխանակ մն, տէ-ն՝ ըսելու պիտի ըսեն մը, տը, նը, րը և այլն։

2002
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀՍՍՀ-Арм.ССР им. А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
78284
1937-87



# ր

րօ | րու | րէ | րե | րի | րո | րա | րը

նոր, տա-րի, ար-մատ, նա-րօտ։

Գլխագիր

**Մ Տ Ն Ր**

մ տ ն ր

Խօսք

Մա-րին նոր տուն մը ու-նի։
Ա-նոր ար-տը մեր տու-նին մօտ է։



Գ. ԴԱՍ (1)

# հ

հու | հէ | հօ | հե | հո | հը | հա | հի
հատ, համ, հոտ, հունտ, հում։

# ւ

աւ | եւ | իւ | ւը | ւէ | ւո | ւօ | ւու
հաւ, նաւ, ար-մաւ, հա-րաւ։

# ս

սու | սօ | սո | սէ | սի | սե | սա
սան, մաս, հարս, տա-սը, սար։

(1) ւ գրին ձայնը իբր վը պիտի հանեն։



# ց

ցօ | ցէ | ցո | ցե | ցու | ցա | ցի | ցը
ցից, ցաւ, հաց, ցո-րեն, մատ-նոց։

Գլխագիր

Հ Ւ Ս Ց
հ ւ ս ց

Խօսք

Հար-սին մատ-նին հաս է։
Սա ար-տը ցո-րեն ցա-նե-ցին։
Ես հաւ մը ու-նիմ։



## Դ. ԴԱՍ

# Լ

լա | լու | լօ | լի | լը | լե | լէ | լո

լալ, լաւ, լար, լոր, լու-սին, սա-լոր։

# Կ

կօ | կո | կէ | կե | կը | կի | կա | կու

կալ, կոր, կուտ, կա-ցին, կա-տու։

# Շ

շէ | շը | շի | շօ | շո | շու | շե | շա

շալ, շիշ, շուն, էշ, կա-շի, կօ-շիկ։



# Պ

պա | պէ | պը | պի | պօ | պու | պո | պե

պատ, պուտ, տա-պար, պա-նիր։

Գլխագիր

Լ Կ Շ Պ

լ կ շ պ

Խօսք

Լու-սին, Շու-շա-նը, Կար-պի-սը և Պետ-րո-սը մեր տու-նը ե-կան ե-րէկ։
Ա-կիս սա-լո-րը շատ կը սի-րէ։

## Ե. ԴԱՍ

# Խ

խա | խի | խօ | խու | խե | խէ | խը | խո

խոտ, խուլ, մա-խիր, խը-նոր, խալ-կէն։

# ծ

ծո | ծը | ծէ | ծե | ծու | ծօ | ծի | ծա

ծակ, ծամ, ծիծ, ծունկ, ծը-նօտ, մա-ծուն։

# դ

դա | դէ | դը | դի | դօ | դո | դու | դե

դա-նակ, դա-լար, դա-տա-ւոր։

# ղ

ղի | ղե | ղէ | ղը | ղօ | ղո | ղու | ղա

ղատ, կաղ, ղա-ւակ, ղա-տիկ, ղա-ղիր։

Գլխագիր

Խ Ծ Դ Ղ

խ ծ դ ղ



Խօսք

Ջոն-րապ դա-նակ մը ու-նի, կու-զէ դա-լար
խոտ կըտ-րել։
Դա-րեհ խա-ծան շու-նը ծե-ծեց։



## Զ. ԴԱՍ

# վ

վա | վե | վէ | վը | վի | վո | վօ | վու

վարդ, կով, ծով, վար, վա-րազ։

# գ

գօ | գու | գո | գե | գէ | գի | գը | գա

գամ, գոմ, գա-րի, գա-րե-գին։

# ղ

ղա | ղէ | ղե | ղը | ղի | ղօ | ղու | ղո

գող, օղ, կա-ղին, ան-կո-ղին։

# ջ

ջո | ջու | ջօ | ջի | ջը | ջե | ջէ | ջա

ջուր, ջո-րի, ջա-ղաց, ղեն-ջակ։

Գլխագիր

Վ Գ Ղ Ջ

վ գ ղ ջ

Խօսք

Մեր ջո-րին ամ-բողջ օ-րը ջուր կը-րեց։
Գառ-նու-կը գո-մին մէջ գա-րի կու-տէ։
Ղու-կաս ջա-ղաց ղըր-կեց պարկ մը ցո-րեն։





Է. ԴԱՍ

# թ

թա | թէ | թը | թի | թո | թու | թօ | թե

թալթ, թու-թակ, թա-գու-հի։

# ճ

ճի | ճէ | ճե | ճա | ճը | ճո | ճօ | ճու

ճագ, ճորք, ճուկ, ճող, ճէթ։

# բ

բա | բի | բէ | բե | բը | բու | բօ | բո

բադ, բաւ, բաշ, բամ-պակ, բե-րան։

# Ք

քէ | քը | քե | քո | քօ | քու | քա | քի

քար, քիթ, քած, քա-մի, քա-ղաք։

Գլխագիր

Թ Ձ Բ Ք

թ ձ բ ք

Խօսք

Թո-րո-սը քա-ղա-քէն ձէթ բե-րաւ մե-զի։
Բա-րու-նակ օձ մը տե-սաւ քա-րին քով։
Կով-կիթ մը կաթ կը-թեց իր կո-վէն։





Ը· ԴԱՍ

# Չ

չա | չի | չու | չօ | չո | չը | չէ | չե

խաչ, չար, չոր, չա-միչ, ոչ-խար։

# Փ

փի | փէ | փե | փօ | փու | փո | փը | փա

փուռ, փիղ, փոկ, փո-քըր, փի-լոն։

# Ճ

ճա | ճէ | ճի | ճօ | ճու | ճե | ճո | ճը

ճանճ, ճա-գար, ճա-հիճ, ճամ-բորդ։

# Ռ

ռա | ռի | ռօ | ռու | ռե | ռէ | ռը | ռո

ռուփ, Նուռ, ճը-պուռ, ա-ռի՛ք։

Գլխագիր

Ջ Փ Ճ Ռ

ջ փ ճ ռ

Խօսք

Ծըռ-ծը-ռան ճը-պու-ռը ամ-բողջ ա-մա-ռը եր-գով ան-ցուց։
Մա փո-քըր Թը-ռա-չու-նը սի-րուն փե-տուր-ներ ու-նի։





Թ. ԴԱՍ



# Ք

քա | քի | քօ | քո

քու | քը | քէ | քե

քէս քիւ

# Ժ

ժա | ժէ | ժե | ժի | ժը | ժո | ժօ | ժու

ժամ ժում իժ ժըժ-մակ ժո-ղով

# Յ

յա | յի | յը | յօ | յո | յու | յէ | յե

յորդ յօնք յոյս յաւէ յուղ յա-րու-թիւն։

Гос. Библиотека



Գլխագիր

Ֆ Ժ Յ

ֆ ժ յ

Խօսք

Թիւ և հա-շիւ ու-նինք այս դա-սին։
Մար-կոս գիւ-ղէն իւղ բե-րաւ մեզ։
Այս բոյ-սը շուտ կը մեծ-նայ։
Թռչ-նոյ մը հա-գուս-տը փե-տու-րըն է։
Ժա-մա-ցոյ-ցը ժա-մե-րը ցոյց կու-տայ։

## Ժ. ԴԱՍ

Բոլորագիր (1)

(1) Ցորդ տղայք գրերու ձայնը միայն կը հանեն, որդ-ժամ է ձայնի և անուան տարբերութիւնը ըմբռնել տալ ու-ոյք ու բէնը ըստ հն-ջ բերանացի ուսուցանել, ամեն անգամ գրին անուանէն յետոյ ձայնը հարցնելով։



ա բ գ դ ե զ է ը թ ժ ի լ
խ ծ կ հ ձ ղ ճ մ յ ն շ ո
չ պ ջ ռ ս վ տ ր ց ւ փ ք
և օ ֆ

Գլխագիր

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ժ Ի Լ
Խ Ծ Կ Հ Ձ Ղ Ճ Մ Յ Ն Շ Ո
Չ Պ Ջ Ռ Ս Վ Տ Ր Ց Ւ Փ Ք
Օ Ֆ

  

Շեղագիր

ա բ գ դ ե զ է ը թ ժ ի լ
խ ծ կ հ ձ ղ ճ մ յ ն շ ո
չ պ ջ ռ ս վ տ ր ց ւ փ ք
օ ֆ

Թիւ

1 2 3 4 5 6 7 8 9 0

 



## ԴԱՍ Ե.
## ՄԵՐ ՏՈՒՆԸ

Մենք երեք եղբայր ենք։ Մեր տունը մեր սրտին ամենէն սիրելի տեղն է։ Մեր տունն ունի դահլիճ մը, ուր հիւր կ'ընդունինք, ննջարաններ՝ ուր կը ննջենք, ճաշարան մը՝ ուր կերակուր կ'ուտենք, մանկանոց, ուր օրիորդ Արփինէն մեզ կը կրթէ, խոհանոց մը՝ ուր մայրիկը մեզ համով կերակուրներ կ'եփէ և մառանը ուր կը դնենք նըպարեղէնը։





Պարտէզին ծայրն է հաւբակը, ուր կը խնամենք հաւ, աքլոր, բադ, սագ, հնդկահաւ, սիրամարգ, փասիան. և գոմը, որու մէջ կը տեսնենք ձի, էշ, կով, եզ, այծ և ոչխար։ Շունը մեր տունը կը պահպանէ և կատուն մուկերը կը ջարդէ։

Առտուն կանուխ կ'ելնենք կը մաքրենք մեր հագուստը խոզանակով, կը լուացուինք, կը սանտրուինք և Աստուծոյ փոքրիկ աղօթք մը ընե-



լէն յետոյ կը նստինք նախաճաշի։ Սեղանին վրայ արդէն պատրաստ են ինքնեփը, թէյնոցը, կաթնամանն ու-թասերը։ Ժամը ութին մանկանոցը կ'երթանք դասի։ Մեր դասարանին մէջ կայ գրասեղան, նստարան, կա-ղամար, գրիչ գիրք, գրատախտակ, գրավէմ և այլն։

Կէս օրին ճաշի սեղանը մեզ կ'ըս-պասէ։ Սեղանին վրայ դրուած են պնակ, գդալ, պատառաքաղ, դա-նակ, ջուրին յուրանը, գինիին շիշը,





գաւաթ, սկահ և թանամանը չերե-փով։

Կերակուրին վրայ մայրիկը մեզ կը բաժնէ եղանակին համեմատ պը-տուղներ, խաղող, նուռ, խնձոր, տանձ, սերկևիլ, դեղձ, սեխ, ձմերուկ։

Ճաշէն յետոյ պարտէզին մէջ ենք, կը խաղանք աչկապուկ, բռնուկի և այլն։ Պարտէզը մշակելու համար ու-նինք բահ, բրիչ, թի, յօտոց, մանգաղ, մանկեռ, ցնցուղ, կացին, սղոց և երկժանի։



Կէս օրէն յետոյ մայրս ընթրիքի պատրաստութեամբ կ'զբաղի խոհանոցին մէջ, ուր կը տեսնեմ դոյլ, սանդ, կաթսայ, եռոտանի, ունելի, ձագար, քերիչ, սան, փայտէ գդալ, ծակ շերեփ, տապարակ, հեծան, կըչիռ, կրակարան, սափոր և այլն։

Մենք կ'ընթրենք ժամը ութին, ժամը իննին արդէն անուշ քուն կը քաշենք անկողնին մէջ։

2013

4172

Հ

ՀՀ Ազգային գրադարան
NL0062772